



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Բացակա էր՝ Մրազ Միրոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝  
Մրազ Միրոյան, Նաիրա Գեվորգյան, Հերմինե Ներսիսյան, Էյա Մուրադյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Միրոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նաիրա Գեվորգյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Մեծաձոր  
համայնքի ղեկավարի առաջարկությունը Մեծաձոր համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Մեծաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 11-ի  
հերթական նիստի օրակարգը՝

- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի  
2024 թվականի համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը  
հաստատելու մասին:
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի  
ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին:
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձորի  
համայնքապետարանի աշխատակազմի  
աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային  
դրույքաչափերը սահմանելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Մեծաձոր համայնքի 2024 թվականի սեփականության գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով

Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է՝

1. Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը 2025 թվականի համար սահմանել 340000 /երեք հարյուր քառասուն հազար /ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով

Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Արագածոտնի մարզի Մեծաձորի համայնքապետարանի  
աշխատակազմի 2025 թվականի աշխատակիցների  
թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն  
հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ  
ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ  
կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով

Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է՝

1. Մեծաձոր համայնքի տարածքում սահմանել 2025 թվականի համար տեղական  
տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և  
<<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-  
րդ հոդվածով.

Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Մեծաձոր համայնքի 2024 թվականի տեղական բյուջեն՝ համաձայն  
հավելվածի 1,2,3,4,5,6 հատվածների:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32- Ն/

Ավագանու անդամներ

ՍՈՒՏԱԼ ԱՐԱՍՅԱՆ

*Սուրբ*

ԹՈՌՈՒՆ ՇԱՄՈՅԱՆ

*Ժամ*

ՀԵՐԻՔ ՇԱՄՈՅԱՆ

*Ժամ*

Համայնքի ղեկավար

ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ



Նխորն արձանագրեց՝ Նաիրա Գեվորգյանը

*Մրազ Միրոյան*